

(այն էլ հասարակ ցուցակի, ուստիքն ասած՝ «описъ»-ի, և ոչ թե իսկական ցուցակի, նույն լեզվով ասած «описание»-ի նման), որը եթե կազմված լիներ հայադիտության մեջ վաղուց ընդունված ձևով, ավելի կնպաստեր հայազետ-

ներին և խեղապես կղշուրացներ նրանց աշխատանքը:

Վեպց. ՍՍՌ ԳԱ քղրակից-անդամ, պրոֆ.
Ի. ԱՐՈՒՆԻԱՆ
(Քրիլիսի)

Армяно-русские отношения в первой трети XVIII в. Сборник документов, ч. I, под редакцией Ашота Иоаннисяна, составители: П. Т. Арутюнян, С. А. Тер-Авакимова, В. А. Акопян, издательство АН Арм. ССР, Ереван, 1964, 5 + 396 стр., цена 1 р. 30 коп.

Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դարի առաջին երեսնամյակում, փաստաթղթերի ժողովածու, մասն I, իմր. Աշոտ Հովհաննիսյանի, կազմեցին՝ Պ. Տ. Հարությունյան, Ս. Ա. Տեր-Ավակիմովա, Վ. Ա. Հակոբյան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964, 5 + 396 էջ, գինը 1 ռ. 30 կ.:

Հայ-ռուսական հարաբերությունների հարցը միշտ էլ առանձնակի հետաքրքրություն է ներկայացրել և իր վրա գրավել պատմաբանների ուշադրությունը: Դեռևս անցյալ դարի վերջերին լույս տեսավ Կ. Նիշանցի «Сношения Петра Великого с армянским народом» (СПб, 1898) փաստագրերի ստվարածավալ ժողովածուն, որտեղ առաջին անգամ գրեթե ամբողջական ձևով հրապարակ հանվեցին և հետազոտողների ուշադրությանը հանձնվեցին XVIII դարի վերջի և XVIII դարի սկզբի հայ ազատագրական շարժման մեծ երախտավոր Բսրայել Օրու գործունեության հետ կապված փաստաթղթերը, գործունեություն, որը նշանավորում էր հայ ազատագրական շարժման նոր ուղեծիրը: Նույն աշխատության մեջ Նիշանցը հրապարակեց նաև մի շարք վավերաթղթեր՝ XVIII դարի 20-ական թթ. պարսկական և թուրքական բռնապետությունների դեմ Արցախի և Սյունիքի հայերի մղած պայքարի վերաբերյալ: Սակայն այդ ժամանակաշրջանի իրադարձությունները Նիշանցը ըստ արժանվույն գնահատել չկարողացավ և տուրք տալով պատմագրության իդեալիստական մտահայեցությանը, այն դիտեց որպես Պետրոս I-ի՝ քրիստոնյա հայ ժողովրդին ազատագրելու ձգտում, զանց առնելով բոլոր այն քաղաքական նկրտումները, որոնք բնորոշ էին և երբեմն հարկադրական ժամանակի Ռուսաստանի արտաքին քաղաքականության համար:

Գիտական և ընթերցող լայն հասարակայնության ուշադրությանը ներկայացվող ժողովածուն շատ է տարբերվում իր նախորդից: Նրա կարևոր արժանիքներից է այն, որ լրացված է բազմաթիվ նոր վավերագրերով, որոնք լուսա-

բանում են նաև հայ և ռուս ժողովուրդների տնտեսական հարաբերությունները զբաղեցնող ժամանակաշրջանում: Այդ հարցի վերաբերյալ ժողովածուում տեղ գտած 65 վավերագրերը մեզ պատկերացում են տալիս հայ-ռուսական առևտրական կապերի մասին, ցույց տալիս այն տեղը, որ գրավում էր Ռուսաստանը հայ վաճառականների առևտրական գործառնությունների մեջ: Առևտրական հարաբերություններից զատ ժողովածուի թեմատիկան ընդգրկում է նաև հետևյալ բաժինները. «Հայերի քաղաքական հարաբերությունները Ռուսաստանի հետ պարսկական արշավանքի նախապատրաստման ժամանակաշրջանում», «Հայկական սղնախների հարաբերությունները Ռուսաստանի հետ պարսկական արշավանքների ժամանակաշրջանում և թուրքերի Անդրկովկաս ներխուժման նախապատրաստումը» և «1724 թ. ռուս-թուրքական պայմանագիրը և հայերի զինված դիմադրությունը թուրք զավթիչներին Անդրկովկասում 1724—1731 թթ.»:

Գրախոսվող ժողովածուի առաջին մասում տեղ են գտել առաջին երկու բաժինները: Այստեղ ընդգրկված 163 վավերագրերի մոտ կեսը (51 փաստաթուղթ) առաջին անգամ է հրապարակվում և դառնում գիտական հասարակայնության սեփականություն:

Նիշանցը իր աշխատության մեջ չէր տվել հրապարակված փաստաթղթերի արխիվային հիմքերը: Ներկա հրատարակության մեջ լրացված է այդ բացը, ինչպես նաև կատարված են տեքստաբանական մի շարք ճշտումներ:

Ժողովածուի ընդարձակ ներածականում (հեղինակ ակադ. Ա. Հովհաննիսյան) քննադատական վերլուծման են ենթարկվում XVIII դարի առաջին երեսնամյակի հայ-ռուսական հարաբե-

թությունների պատմությունը ընդորոշող կարևոր իրադարձությունները: Խոսելով հիշյալ ժամանակի հայ-ոսմական առևտրական կապերի մասին, Աշոտ Հովհաննիսյանը ընդգծում է, որ շնայած 1667 և 1673 թթ. հայ վաճառականների հետ ոսմական կառավարության կնքած առևտրական պայմանագրերին, որոնցով վերջինս ձգտում էր պարսկական առևտրի հունը տեղափոխել դեպի Ռուսաստան և նրա վրայով արևմտաեվրոպական երկրներ, XVIII դարի սկզբին էլ պարսկական առևտրի հիմնական ճանապարհը ընկած էր Թուրքիայի վրայով դեպի Արևմուտք: Հայ վաճառականներին ընձեռված առանձնաշնորհումներն այնուամենայնիվ չծառայեցին ցարական Ռուսաստանի հետամտած նպատակին, թեպետ և անժխտելի է, որ վերահիշյալ առևտրական պայմանագրերի կնքումից հետո, ինչպես ցույց են տալիս սույն ժողովածուում առաջին անգամ հրապարակվող փաստաթղթերը, հայ վաճառականների առևտրական գործարքները Վոլգա-Կասպյան տարանցիկ մագիստրալով զգալիորեն աճել էին: Սակայն չրավականանալով դրանով, ռուս կառավարությունը ձգտում էր իրանական ասրոդո հանությունը իրականացնել Ռուսաստանի վրայով: Ինչպես ցույց է տալիս Ա. Պ. Վոլինսկու 1715 թ. առաքելությունը Պարսկաստան, ոսմական կառավարությունը ձգտում էր համանման առանձնաշնորհումներ վերցնել պարսկական կառավարությունից նաև ուս վաճառականության համար, մի բան, որը հաջողությամբ չպսակվեց: Ի վերջո Ռուսաստանը ձգտում էր նաև այն բանին, որպեսզի շահագրգռի Ռուսաստան զաղթած իրանահայ վաճառականներին իրենց դրամագլուխը մտցնելու արդյունաբերական գործունեության ոլորտը:

Կասկած չկա, որ հայ-ոսմական առևտրական հարաբերությունները մեծապես օժանդակել են քաղաքական կապերի ընդլայնմանը և հետագա զարգացմանը, չհանդիսանալով, սակայն, այդ կապերի միակ և հիմնական հենարանը: XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին Պարսկաստանում ծայր առած ժողովրդական շարժումները մեծապես նպաստեցին նաև Անդրկովկասի ժողովուրդների և, առաջին հերթին, հայերի ու վրացիների ազատագրական շարժումների սրմանը: Հնարավորություն չունենալով սեփական ուժերով հասնելու բաղձալի ազատությանը, մինչև XVIII դարի վերջերը հայ ազատագրական շարժման ղեկավարները իրենց հայացքները դարձնում էին դեպի արևմտյան պետությունները: Իսրայել Օրին առաջին խոշոր այն գործիչն էր, որ հանդես եկավ հայ ազատագրական շարժման ուսական կողմնորոշման սկզբնավորողի դերում: Մանրամասն վերլուծելով Իսրայել

Օրու քաղաքական գործունեության նախընթաց ղեկավարումները, ներածականի հեղինակը ծանրանում է ի վերջո նրա կատարած քաղաքական դարակազմիկ շրջադարձի վրա: Պետրոս I-ին ներկայացրած նրա ծրագրերը ցույց են տալիս, թե որպիսի հեռատես քաղաքագետ էր Օրին: Նա հասկանում էր, որ Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական լծից անպայման հակադարձ ունեցիա է առաջացնելու Թուրքիայի, ինչպես նաև դեպի Թուրքիան հակված լեզգի ֆեոդալների կողմից և աշխատում էր շեղբացնել այդ վտանգը: Այդ նպատակին ծառայելու էր ոչ միայն Հոռմեական սրբ. կայսրության և Ռուսաստանի հակաթուրքական կռաւիցիան, այլև, ինչպես արդարացիորեն նշում է Աշոտ Հովհաննիսյանը, Օրինի «ձգտումը՝ դուրս բերելու հայերի ազատագրական պայքարը ազգային սահմանափակության փակուղուց» (էջ XXIII): Ուստի և Օրին սերտ հարաբերությունների մեջ էր մտնում Մոսկվայում ապաստան գտած իմերեթական Արշիլ Թագավորի հետ, իսկ իր պարսկական դեսպանության տարիներին ձգտում էր նաև ադրբեջանական գործիչներին հակել դեպի Ռուսաստան:

Հետագայում, XVIII դարի 20-ական թթ. ծավալված իրադարձությունները ցույց տվեցին, որ իսկապես, հայերի ազատագրական պայքարը արդյունավետ կարող էր լինել և եղավ շնորհիվ անդրկովկասյան հարևան երեք զխավոր ժողովուրդների ուղղմա-քաղաքական սերտ համագործակցության:

Եթե Օրու գործունեությունը նպատակամղված էր Հայաստանի և Անդրկովկասի ազատագրմանը, ապա ոսմական կառավարությունն էլ իր հերթին շահագրգռված էր ոչ միայն ընդարձակելու իրեն համար արդյունավետ առևտրական հարաբերությունները Արևելքում, այլև ծավալվելու դեպի Արևելք: Սույն շարժառիթն էր ընկած Պետրոս I-ի՝ դեպի Օրին և նրա ծրագրերը ունեցած ուշադիր վերաբերմունքի հիմքում: Սպասված առիթը ստեղծվեց 1720-ական թթ. անմիջապես սկզբներին, երբ ավզանների արշավանքի հետևանքով փլուզվեց իր հոգևարքն ապրող Սեֆյան Պարսկաստանը: Ներածականում բացահայտվում են այն հիմնական մոմենտները, որոնք ընդորոշում են Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը պարսկական արշավանքի տարիներին: Հետաքրքրական է, որ 1722 թ. հետո ծավալված իրադարձությունները եկան հաստատելու, թե որքան իրավացի է եղել ոմանց կողմից «բախտախնդիր» գործիչ համարված Իսրայել Օրին՝ հնարավոր բարդությունների ստեղծման հարցում իր փանխատեսումների ու զնահատականների մեջ:

Քնական է, որ ռուսական զորքերի հայտնվելը Կասպիականի ափերին խանդավառություն կառաջացնե՞ր հայերի, ինչպես նաև վրացիների մոտ: Վրացական զորքերի շարժումը դեպի Գանձակ և հանդիպումը Ղարաբաղի հայկական ուժերի հետ ինքնրստինքյան հետապնդում էր այն նպատակը, որ ընդառաջ դնան և միավորվեն ռուսական զորարանականների հետ: 1722 թ. տեղի ունեցած ռազմական գործողությունները, ինչպես նաև 1723 թ. նախատեսված նրանց հետագա ծավալումը պետք է պսակվե՞ր հայ-վրացական միացյալ թագավորության ստեղծմամբ: Ուստի հետագա դեպքերը խանգարեցին այդ ծրագրի կենսագործմանը: Տեղի չունեցավ նաև հայ-վրացական զորքերի հանդիպումը ռուսական գործող կորպուսի հետ:

Շամախի քաղաքը այդ թվականներին ռազմաստրատեգիական խոշոր նշանակություն էր ըստացել: Ինչպես հայ-վրացական, այնպես էլ ռուսական կողմը ցանկանում էր, որպեսզի հակառակորդի ռազմական հենարան դարձած Շամախու գրավումը և զորքերի հանդիպումը այդ քաղաքում կատարվե՞ր մյուս կողմի նախաձեռնությամբ: Շամախու գրավման կենսական նշանակությունը պայմանավորված էր մասնավորապես նրանով, որ այն հնարավորություն կտար խափանելու լեզգի ֆեոդալների անընդմեջ ավերիչ հարձակումները Ղարաբաղի վրա: Սակայն հարցը բարդացնում էր այն պարագան, որ հայկական համեմատաբար փոքրաթիվ և վատ զինված զինական ուժերը ի վիճակի չէին, պաշտպանողական մարտեր մղելով հանդերձ, իրագործել Շամախու գրավումը, մինչդեռ ռուսների կողմից դրա կենսագործումը լի էր միջազգային դրության խճճման սպառնալիքով, այն է՝ Թուրքիայի կողմից հնարավոր հարձակումով: Հետագայում Շամախու գրավումը արգելակվեց ռուս-թուրքական 1724 թ. պայմանագրի առկայությամբ:

Նման իրավիճակը հայկական ցանուցիւր զինական ուժերի առջև հրամայական պահանջ դրեց միավորվելու՝ սղնախներ կազմելու, որոնց գլուխ կանգնեցին Աղվանից Ծսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը և Ավան-յուզբաշին: «Եթե մինչ այդ պահը (այսինքն ռուսական զորքերի հայտնվելը Արևելյան Անդրկովկասում—Վ. Դ.), —նշում է Աշոտ Հովհաննիսյանը,—Ռուսաստանի սգնությամբ որպես հայերի ազատագրման գաղափարի արտահայտիչներ հանդիսանում էին սոսկ անուշափուր զործի-ները, ապա այժմ այդ գաղափարը կենդանի արձագանք է գտնում հայ ժողովրդի լայն զանգվածների գիտակցության մեջ: Շնորհիվ Ռուսաստանի զինված միջամտության, պարսիկների և թուրքերի բազմադարյան տիրապետության հետևանքով խեղդված

հայ ժողովրդի ազատագրական շարժումը, Սեֆյանների իշխանության սկիզբ առած փլուզման և Անդրկովկասում օսմանյան հին ու ատելի տիրապետության վերականգնման վտանգի պայմաններում ընդունել էր համաժողովրդական շարժման բնույթ» (էջ 11):

Սկզբնական շրջանում, նախքան թուրքական արշավանքը Անդրկովկաս, Ղարաբաղի ազատամարտիկների պայքարն ուղղվում էր լեզգիների և տեղական պարսիկ ֆեոդալների դեմ: Սրդնախներում ծավալված շուրջ տասնամյա հերոսամարտերի ընթացքում հայ ազատագրական շարժման ղեկավարները շարունակում էին հայցել Ռուսաստանի օգնությունը՝ զինական աջակցություն ստանալու ակնկալությամբ և այն հաստատուն գիտակցությամբ, որ միայնակ ի վիճակի չեն լինի դիմակայել թուրքական զորարանականներին, որ վաղ թե ուշ ստիպված կլինեն տեղի տալու, եթե չհասնի քաղաքի օգնությունը:

Սղնախների դիմադրությունը կազմակերպելու հարցում, անշուշտ, խիստ մեծ է եղել Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետի դերը: Կարևոր եղավ նրա դերը նաև հայ-վրացական ազդեցության հակաօսմանյան ճակատի ստեղծման հարցում: Հայերին Ռուսաստանի հովանավորության տակ վերցնելու մասին կայսերական հրովարտակով ժամանելով սղնախներ, Իվան Կարապետը ակնառու դեր խաղաց Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի, նրանց մարտական ուժերի համախմբման գործում: Ներածականում իրավացիորեն ընդգծվում է նաև Իվան Կարապետի դերը հատկապես Գանձակի պայմանագրի կնքման հարցում, պայմանագիր, որը թուրք զավթիչների դեմ միավորում էր ոչ միայն հայ և ազդեցության, այլև վրացական ուժերը: Ընդհանուր գնահատված նաև Իվան Կարապետի ջանքերը՝ հայ ֆեոդալական վերնախավի շարքերում տիրող ներքին երկպառակություններին վերջ տալու ուղղությամբ: Մենք լիովին համաձայն ենք արտահայտված այն մտքին, թե շնայած տարածայնություններին, Ղարաբաղի հայ մելիքների ու յուզբաշիների մեջ փոքրիշտե ցայտուն կողմնորոշում դեպի Պարսկաստան կամ Թուրքիա՝ գոյություն չի ունեցել:

Անդրկովկասյան երեք ժողովուրդների ուժերի համախմբման շնորհիվ էր, որ Կարբիի ու Երեվանի հերոսական պաշտպանություններից հետո սղնախների զինական ուժերը երկարատև անձնուրաց դիմադրություն ցույց տվեցին թուրքական զորաբանականներին:

Ուշադրության արժանի է Ծսայի Հասան-Ջալալյանի անձին և գործունեությանը տրված գնահատականը: Հայ ազատագրական շարժման այդ անձնվեր և կարկառուն ներկայացուցչի մասին

ումանց կողմից այն միտքն է հայտնվել, թե նա ի վերջո դավաճանության ուղին բռնեց՝ առաջարկելով կապիտուլյացիայի ենթարկվել թուրքերի առջև: Ծիշտ է նշում Աշոտ Հովհաննիսյանը, որ խորապես ողբերգական եղավ ծերունի կաթողիկոսի վախճանը, որչափ անդժված բարդ իրավիճակում նա ստիպված էր մտածել ժողովրդի արյան ապարդյուն հեղումը դաշարեցնելու մասին, որովհետև Ռուսաստանիս սպասված օգնության այնպես էլ չստանալը նրա՝ որպես ազատագրական շարժման ղեկավարներից մեկի առջև դրել էր համլետյան հավերժական հարցը: Սակայն Շուայի կաթողիկոս Հասան-Ջալալյանի կյանքի վերջին երկու տարում ռուսական արքունիք ուղարկած գրագրությունները ցույց են տալիս, հիրավի, որ թուրքերին ենթարկվելու հեռանկարի մասին նա հիշեցնում էր անընդհատ, որպեսզի արագացնի, իրականություն դարձնի այն զինական աջակցությունը, որին ապարդյուն կերպով սպասում էր տարիներ ի վեր:

Այժմ մի քանի դիտողություններ ինչպես ժողովածուի մեջ տեղ գտած վավերագրերի, այնպես էլ ներածականի մասին:

Խոսելով 1667 և 1673 թթ. հայ-ռուսական առևտրական պայմանագրի մասին և ցույց տալով այն մեծ նշանակությունը, որ տալիս էր ներառյալ ռուսական արքունիքը, չպետք է նրա նշանակությունը պարփակել միայն այդ շրջանակներում: Դադտնիք չէ, որ պայմանագրի կնքումը արդյունք էր Ջուղայի հայ առևտրական ընկերության նախաձեռնության, հետևաբար հարցը ունի և մեկ ուրիշ կողմ, որը և բացահայտման կարիք է զգում: Մեր կարծիքով, հարցի մյուս էական կողմը այն է, որ օգտվելով տարանցիկ հիմնական մագիստրալից, որը Թուրքիայի վերայով ձգվում էր դեպի Եվրոպա, հայ վաճառականները, ելնելով իրենց առևտրական շահերից և հնարավոր մրցակցությունը արգելակելու ձգտումից, աշխատում էին իրենց մենաշնորհը դարձնել նաև Վոլգա-Կասպյան ճանապարհը, մանավանդ եթե ի նկատի ունենանք, որ նրանք առևտրական կենսական կապերով կապված էին Աստրախանի հետ, որն այդ ճանապարհի վրա ընկած առևտրական խոշոր նշանակություն ունեցող կայաններից մեկն էր:

Այնուհետև, 1723 թ. սեպտեմբերի 12-ի ռուս-պարսկական պայմանագիրը գնահատելիս պետք է միշտ ի նկատի ունենալ, որ այն ճանաչում չգտավ և չվավերացվեց Սեֆյան հարստության վերջին ներկայացուցիչ Թահմազ շահի կողմից: Այստեղից էլ՝ ռուսական դիվանագիտության թափած խոշոր ջանքերը՝ ամեն զնով հասնելու այդ պայմանագրի վավերացմանը պարսկական արքունիքի կողմից, թուրքական ազդեցության դեմ Անդրկովկասի երեք գլխավոր ժողովուրդների,

Ռուսաստանի և Պարսկաստանի միասնական ճակատ կազմելու հնարավորություն ստանալու համար:

Չի կարելի լիովին համաձայնվել ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի արտահայտած այն տեսակետի հետ, թե «համեմատաբար քիչ ենթարկվելով ճնշումների Պարսկաստանում կամ Թուրքիայում տիրող բռնապետական կարգերի կողմից, նրանք (այսինքն հայ վաճառականները—Վ. Դ.) չէին կարող դառնալ Հայաստանի ժողովրդական զանգվածների սոցիալական ու քաղաքական ձգտումների արտահայտիչներ և ուղիղ հարաբերակցության մեջ գտնվել նրանց ազատագրական պայքարի հետ» (էջ XIV): Ծիշտ համարելով այդ բնութագրումը նախորդ՝ XVII դարի համար, մենք, սակայն, այն կարծիքին ենք, որ արդեն XVIII դարի 20-ական թթ. պարսկահայ վաճառականության դիրքը և գոյավիճակը էական փոփոխություններ էր կրել: Ոչ մի կասկած չի կարող լինել, որ մասնավորապես Նոր-Ջուղայի մեծահարուստ վաճառականությունը սերտ կապերի մեջ էր գտնվում պարսկական արքունիքի հետ և վերջինիս համար առևտրական խոշոր գործարքներ էր կատարում: Բայց անհրաժեշտ է նաև ի նկատի ունենալ, որ Սեֆյան Պարսկաստանի փլուզման պայմաններում, երբ երկրում քաոսային վիճակ էր տիրում, օրեկտիվ այդ հանգամանքները պետք է որ հայ վաճառականության մի նշանակալից մասին նետին և նետեցին ազատագրական պայքարի հնոցը: Ուստի պատահական չէր, որ հայ վաճառականներից շատերը, լքելով տուն, տեղ և հարստություն, գորամասեր էին կազմակերպում՝ ռուսական բանակի շարքերում մարտնչելու ընդդեմ պարսիկների: Եվ հայկական հեծյալ էսկադրոնի կազմակերպման դործում Պետրոս դի Սարգիս Գիլանենցը միայնակ չէր: Հայ խոշոր վաճառականները կազար խրիստոֆորովը, Այվազովը, Պավել Զինովևը և ուրիշներ Գիլանենցի հետ իրենց միջոցներով պահում էին 150 հոգուց բաղկացած հիշյալ էսկադրոնը և մասնակցում ռազմական գործողություններին: Ազատագրական շարժմանը մեծ մասնակցություն ցուցաբերած՝ Պետրոս Մեծի պատվիրակ Բվան Կարապետը և նրա եղբայր Լուկա Շիրվանովը ելած էին Պարսկաստանից և առևտրական սերտ կապերով կապված էին այդ երկրի հետ: Այս արդեն մի նոր և ակնառու երևույթ էր, խախտումն հին տրադիցիաների և անցումն ակտիվ հասարակական-քաղաքական գործունեության, լայն ներգրավվում ազատագրական պայքարի մեջ, որի ղեկավարն էր դառնալու նա հետագայում:

Վերջում կուզեինք նշել այն թերությունները, որոնք, մեր կարծիքով, տեղ են գտել ժողովա-

ծուում հրատարակված փաստաթղթերի մեջ: Դրանցից առաջինը այն է, որ ժողովածուն կազմողները բավարարվել են Հին ակտերի պետական կենտրոնական արխիվի և Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի հիմնականում հինգ ֆոնդերից քաղած նյութերի հրապարակումով, մինչդեռ այլ ֆոնդերում կան ժամանակի հայ-ռուսական հարաբերությունները բնորոշող բազմաթիվ հետաքրքրական վավերագրեր: Այսպես, օրինակ, մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն փաստաթղթերը, որոնք ցույց են տալիս հայ վաճառականական կապիտալի որոշ ներկայացուցիչների անցումը առևտրական գործառնությունների ոլորտից դեպի արդյունաբերական գործունեության ոլորտը: Այդ տեսակետից պատմական խիստ մեծ արժեք է ներկայացնում ջուղայահայ մեծահարուստ վաճառական Իգնատի Ֆրանցե Շերիմանի գործունեությունը, նախ որպես Մոսկվայի մետաքսագործարաններից մեկի բաժնետեր, որին մասնակից էին պետության ժամանակաշրջանի պետական ականավոր գործիչներից Շաֆիրովն ու Ապրաքսինը, իսկ հետո էլ որպես հիմնադիր Մոսկվայի մոտ գտնվող Ֆրյանովոյի մետաքսագործարանի, որը լավագույններից մեկն էր ամբողջ Ռուսաստանում: Այդ իմաստով էլ անհրաժեշտ էր օգտագործել նաև «Մանուֆակտուր-կուլեգիայի» և «Կոմերց-կուլեգիայի» ֆոնդերը:

Մեր կարծիքով անհրաժեշտ էր հրապարակել նաև Պֆալցի Կուրֆյուրստին 1699 թ. սեպտեմբերի 22-ին Իսրայել Օրու տված զեկուցագիրը, որը լույս էր տեսել Նզյանցի ժողովածուում: Այս վավերագրում Իսրայել Օրին փաստորեն առաջին անգամ խոսում է այն նշանակության և դերի մասին, որ ունենալու էր Մոսկովյան պետությունը Հայաստանի ազատագրման գործում: Այստեղ մենք ուզում ենք թվարկել նաև մի շարք այլ փաստաթղթեր, որոնք տեղ չեն գտել ներկա ժողովածուի մեջ: Դրանք են՝ № 57 և № 58 վավերագրերը (1702 թ. փետրվարի 25-ի), որոնք մատնանշում են Օրու մտադրությունը՝ ճանապարհորդելու Պարսկաստան, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա մտնելու ռուսական ծառայության մեջ:

Դրախոսվող ժողովածուում տեղ են գտել նաև այլ բնույթի թերություններ: Այսպես՝ № 5 փաստաթուղթը վերնագրված է՝ «Просьба армянских джультфинских купцов о пропуске их с товарами из Астрахани в Москву. Перечень товаров», որը սխալ է, քանի որ հիշյալ փաստաթուղթը Աստրախանի վոյեվոդա Պյոտր Խովանսկու զեկուցագիրն է Պետրոս I-ին հայ վաճառականների վերահիշյալ խնդրանքի մասին և ոչ թե նրանց աղերսագիրը: № 6 փաստաթղթի վերնագրում հիշատակված է ոմն Ավանեսով,

մինչդեռ հիշյալ անձնավորությունը ստորագրում էր Խաչիկ Իվանիսով: Տվյալ ժամանակաշրջանում հայկական Հովհաննիսյան ազգանունը ռուսերեն տառադարձվում էր Իվանիսով, ինչպես և ստորագրում է խնդրարկուն: Այնուհետև՝ № 10 վավերաթուղթը կրում է «Подорожная, данная армянским купцам для свободного проезда из Москвы до Архангельска» վերտառությունը: Տվյալ դեպքում ճիշտ կլիներ «подорожная» բառը փոխարինել «проезжая грамота» արտահայտությամբ, որովհետև վավերագիրը ինքնըստինքյան այդպիսին է: № 17 վավերագիրը, որով ընդունվում է հայ վաճառականների խնդիրը՝ թույլատրել իրենց արևմտանվրուպական երկրների հետ առևտուրը կատարել ոչ թե Արխանգելսկի, այլ Ռուգոդեկի և Սանկտ-Պետերբուրգի վրայով, քանի որ նախկին ճանապարհի վրա նրանք երկիցս թալանվել են ֆրանկների (այսինքն՝ եվրոպացիների) կողմից, վերնագրված է՝ «О европейцах, нарушающих торговые интересы российской казны и армянской торговой компании». Նման վերնագիրը ամենևին չի համապատասխանում փաստաթղթի բուն բովանդակությանը, որովհետև այնտեղ խոսք չկա ռուսական պետական գանձարանի մասին և հայ վաճառականների թալանվելը ամենևին էլ վնաս չէր տա ռուսական գանձարանին: Այստեղ, ինչպես արդեն նշել ենք վերևում, խոսքը գնում է այն մասին, որ նախկին առևտրական ճանապարհի վրտանգավորության պատճառով հայ վաճառականները խնդրում են օգտվել Ռուգոդեկ—Պետերբուրգ գծով, որը նրանց ձեռնտու էր նաև ճանապարհը կարճեցնելու իմաստով: Նույնպիսի անճշտություններ են պարունակում նաև № № 21, 31, 34 և այլ վավերագրերի վերնագրերը:

Մի շարք դեպքերում մեկ վերնագրի և ամսաթվի տակ տեղադրվել են մեկից ավելի և տարբեր ժամանակներում գրված վավերագրեր, ինչպես՝ № № 18, 23, 29 և 32: Ծիշտ է, դրանք շոշափում են միևնույն հարցերը և սերտորեն կապված են միմյանց հետ, բայց և այնպես մեր կարծիքով ճիշտ կլիներ տարանջատել, տալ զատ-զատ:

Չի կարելի համաձայնվել որոշ բացատրությունների հետ, որ տրվում են անհասկանալի կամ աղավաղված բառերի կապակցությամբ: Այսպես, օրինակ, «Մենք հաւատալիք ունիմք այտ քո օրհնեալ տանդ և քո օծեալ, անթառամելի, ինքնակալ, ի վերուստէն շնորհեալ թագաւորութիւնդ լինի, որ լսես սակաւ տեկիս և արիանաս» (վավերագիր № 66) նախադասության մեջ ընդգծված «տեկիս» դժվար վերծանելի բառը բացատրվում է այսպես. «по смыслу обозначает жалобу, протест»: Սակայն եթե

ընդունելու լինենք նման բացատրությունը, ապա կտեսնենք, որ այն չի համաձայնում հաջորդ «և արիանաս» բառերի հետ: Բողոք կամ գանգատ լսելը ինչ դրդառիթ կարող է լինել արիանալու համար: Շատ հավանական է, որ «տրեխս» բառի մեջ բաց է թողնված «ս» տառը և «տրեխտ» պետք է կարդալ «ստրկիս», որ այստեղ ծառայի իմաստ ունի: Գուցե և «տրեկիսը» պետք է կարդալ «տրպիս», այսինքն «տրուպիս», խոնարհ, շնչին ծառայիս: Այդ դեպքում նախադասության վերջին մասը հետևյալ իմաստն է ստանում՝ «ունեն դնես շնչին ծառայիս (կամ ստրկիս) և արիանաս», ինչ և ավելի մոտ պետք է համարել տեքստի բովանդակությանը: Ծիշտ չեն վերծանված նաև № 98 փաստաթղթերից «Գուպա Սլէմն ծանցնէլ, զոր ինչ ուսեալ է խանիցն, որ կամի զաթել այս կողմերն» նախադասության մեջ ընդգծված բառերը, որոնք թարգմանվում են հետևյալ կերպ՝ «Баба Сулейман знакомит»: Սակայն ո՞ւմ և ինչ է ծանոթացնում Սուլեյման Բարան: Նման վերծանումը մեզ ոչինչ չի ասում: Վերոհիշյալ նախադասության միտքն այն է, որ պետք է ծանուցել այդ մասին, այսինքն հայտնել, տեղյակ պահել Սուլեյման Բարային, որը խանից դրդված (այստեղ խոսքը հավանաբար գնում է լեզդի ֆեոդալների մասին, որոնք հայտնի էին իրենց օսմանյան կողմնորոշմամբ և Արցախի ու Սյունիքի երկրամասերը գրավելու և ավարառության ենթարկելու իրենց մշտական ձգտումներով—Վ. Դ.) կամենում է «այն կողմերը»: այսինքն Սյունիքը գրավել, զավթել:

Անհրաժեշտ է նշել նաև, որ գրախոսվող ժողովածուի առաջին մասում տեղ են գտել որոշ

փաստաթղթեր, որոնք առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում և դուրս են գալիս նյութի շրջանակներից. այսպես, № 9 վավերագիրը աստրախանարնակ (և ոչ թե անդրծովյան—заморские, ինչպես ոչ ճիշտ ասված է վավերագրի խորագրում—Վ. Դ.) հնդիկ վաճառականների բողոքագիրն է և կապ չունի հայերի հետ և այլն:

Այս դիտողություններն, անշուշտ, չեն կարող նսեմացնել ժողովածուի արժանիքները: Երկու կարծիք չի կարող լինել այն մասին, որ ժողովածուն մեծապես կնպաստի XVIII դարի սկզբի հայ-ոսմական հարաբերությունների պատմության լուսարանմանը: Վավերագրերի այս արժեքավոր ժողովածուն գիտական լայն շրջանառության մեջ է գնում հայ-ոսմական քաղաքական հարաբերությունները և XVIII դարի 20-ական թթ. հայ ազատագրական շարժումները բնութագրող բազմաթիվ կարևոր փաստաթղթեր: Այն հնարավորություն է տալիս ըմբռնելու, դյուրություն է ընձեռում հետազոտելու հայ ազատագրական շարժման նոր դիրքորոշման, դեպի Ռուսաստան նրա շրջադարձի բուն արմատները, բացահայտում է հայ-ոսմական առնչությունների բազմաբովանդակ էությունը: Անկասկած է, որ ակադ. Աշոտ Հովհաննիսյանի գործունե մասնակցությամբ և ղեկավարությամբ պատմական գիտությունների դոկտոր հանգուցյալ Պ. Տ. Հարությունյանի, Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատողներ Ս. Ա. Տեր-Ավակիմովան և Վ. Ա. Հակոբյանը շնորհակալ գործ են կատարել՝ հրապարակ հանելով վերոհիշյալ ժողովածուն:

Վ. ԴԻԼՈՅԱՆ

MIROSLAWA ZAKRZEWSKA-DUBASOWA, *Ormianie Zamojscy i Ich rola w wymianie handiowej i kulturalnej między Polską a Wschodem*, Lublin, 1965, 324 p.

МИРОСЛАВА ЗАКШЕВСКА-ДУБАСОВА, *Армяне Замостья и их роль в торговом и культурном обмене между Польшей и Востоком*, Люблин, 1965, 324 стр. (на польском языке).

Литература по истории армянских колоний в Польше и Западной Украине недавно пополнилась еще одной замечательной книгой — монографией польского историка Мирославы Закшевски-Дубасовой «Армяне Замостья и их роль в торговом и культурном обмене между Польшей и Востоком», являющейся диссертационной работой автора. Выход в свет этой работы означает, что успешно разрешена еще одна проблема,

касающаяся роли армянских переселенцев в развитии торговых и культурных отношений Польши с восточными странами. Для арменоведения же значение этой книги состоит прежде всего в том, что в ней глубоко и всесторонне раскрыты вопросы социально-экономической и правовой жизни армянского населения одной из значительных колоний Речи Посполитой — города Замостья.